

«Յիսուս Քրիստոսը նույնն է երեկ, այսօր և հավիտյան» (Եբր. 13:8):

Նրջաբերական նամակ

Հոկտեմբեր- դեկտեմբեր 2014

Մեր Տեր Յիսուս Քրիստոսի սուրբ և թանկագին անունով սրտանց ողջունում եմ ողջ աշխարհում գտնվող բոլոր եղբայրներին ու քույրերին քահանայապետական աղոթքում ասված իր իսկ խոսքերով. «Ես Քեզ փառավորեցի երկրի վրա, Ես կատարեցի այն գործը, որ Դու ինձ տվեցիր անելու» (Հովհ. 17:4):

Դա Աստծո ծրագիրն է, ով «*Ժաճեց, որ իր ամբողջ լիությունը Նրա մեջ բնակվի, և Նրանով ամեն բան հաշտեցնի իր հետ՝ նրա միջոցով, նրա խաչի արյունով խաղաղություն անելով*»:

Դա իրականացավ հավիտենության համար. «*Եվ ձեզ էլ, որ մի ժամանակ օտարացած ու թշնամի էիք մտքով չար գործերում, հիմա իր մտեղեն մարմնի մեջ իր մահվամբ հաշտեցրեց, որպեսզի ձեզ սուրբ, անբիծ ու անմեղադրելի կանգնեցնի իր առաջ*» (Կողոս.1:21,22):

Նրա հաղթանակը մեր հաղթանակն է: «*Իշխանություններին ու պետություններին մերկացնելով հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց իր մեջ*» (Կողոս.2:15):

«*Եվ այնուհետև սպասում է, մինչև որ իր բոլոր թշնամիներն իր ոտքերին պատվանդան դրվեն: Որովհետև մեկ զոհով սրբվողներին հավիտյան կատարյալ դարձրեց*» (Եբր.10:13,14):

Տիրոջ հարությունը եղավ տեսանելի և հաղթական ապացույցը, որ մահը, դժոխքը և սատանան պարտված են: Իր առաջին քարոզում Պետրոսը վկայակոչեց այն, ինչ գրված էր Սաղմոս 16:8-11 համարներում. «*Որովհետև իմ մարմինը գերեզմանում չես թողնի, ոչ էլ Քո Արթին ապականություն տեսնել կտաս*»: (Գործք 2:27):

Հարուցյալ Տերը հայտնեց իրեններին հաղթության պատգամը. «*Երկնքում ու երկրիս վրա ամեն իշխանություն ինձ տրվեց*» (Մատթ.28:18): Մենք էլ հափշտակության ժամանակ կաղաղակենք. «*Բայց գոհություն Աստծուն, որ մեզ հաղթություն տվեց մեր Տեր Յիսուս Քրիստոսի միջոցով*» (1 Կորնթ. 15:57):

Մեր Փրկիչն իրականացրեց փրկագնման գործը, ինչպես գրված է Եսայի 42:1-4 համարներում և հաստատվեց Մատթ. 12:17-21 համարներում: Նա հանգչող պատրույզը չի մարի, մինչև ամեն բան իրականացնի և արդարությունը հաղթանակի բոլոր հաղթողների հետ: Ամեն:

Երբ մեր Տերը քառասուն օր խոսեց իր առաքյալների հետ Աստծո թագավորության վերաբերյալ, իր փառավոր հարությունից հետո (Գործք 1:1-8), երկինք համբարձվեց և մի ամպ ծածկեց Նրան նրանց աչքից (հ. 9): Անմիջապես սպիտակ զգեստներով երկու մարդ հայտնվեցին և նրանց ասացին. «*Ո՛վ գալիլիացի մարդիկ, ինչու՞ եք կանգնած դեպի երկինք նայում, այն նույն Յիսուսը, որ ձեզանից երկինք վերցվեց, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսնում եք Նրան երկինք գնալիս*» (հ. 11):

Մեր Տերը մնաց նրանց հետ «մինչև այն օրը, երբ Սուրբ Հոգու միջոցով իր ընտրած առաքյալներին պատվեր տվեց և հեռացավ» (Գործք 1:2):

Այս պարագայում Նա շեշտեց Հոր խոստումը՝ Սուրբ Հոգով մկրտվելու և լցվելու խոստումը (հհ. 4-5), որպեսզի զորություն ստանան և դառնան իր վկաները: Այնուհետև համբարձվեց ամպի վրա մինչ նրանք իրեն էին նայում: Սուրբ Գրքի համաձայն Նա

կվերադառնա նույն ձևով, և մենք ամպերով կհափշտակվենք դիմավորելու Նրան օդերում (1 Թես. 4:17), ոչ թե ինչ-որ տեղ երկրի վրա :

Գործք առաքելոց գրքի երկրորդ գլխում կարդում ենք Սուրբ Հոգու հեղման մասին, որը կանխասել էր Հովել մարգարեն երկրորդ գլխում և Հովհաննես Սկրտիչը հետևյալ խոսքերով. «Նա ձեզ պիտի մկրտի Սուրբ Հոգով և կրակով» (Մատթ. 3:11): Այդ խոսքերը հաստատեց նաև մեր Տերը. «Որովհետև Հովհաննեսը հիրավի ջրով մկրտվեց, բայց սրանից ոչ շատ օրեր հետո դուք Սուրբ Հոգով կմկրտվեք» (Գործք 1:5): Առաջին քարոզը, որին հետևեցին ապաշխարությունը, հավատքը, ջրով մկրտությունը և Սուրբ Հոգով մկրտությունը հավիտյան ճշմարիտ օրինակն է Աստծո Եկեղեցում: Քարոզի միջոցով հենց այդ նույն օրը երեք հազար հոգի ավելացան հավատացյալներին: Այնուհետև գտնում ենք սկզբնական Եկեղեցու չորս չափանիշները՝ «Ու միշտ հետևում էին առաքյալների ուսմունքին, հաղորդությանը, հացը կտրելուն և աղոթքներին» (Գործք 2:42):

Առաքյալների ուսմունքը կատարելապես համապատասխանում էր մարգարեների կանխասումներին: Ահա թե ինչու Եկեղեցին կառուցված է «առաքյալների ու մարգարեների հիմքի վրա, որի անկյունաքարը Քրիստոսն է» (Եփես.2:20):

Կենդանի Աստծո Եկեղեցուն պատկանողների համար միշտ շատ կարևոր է եղել հավատալ միայն այն բանին, ինչ Սուրբ Գիրքն է ասում և պահել այն, ինչ Սուրբ Գիրքն է սովորեցնում: Գառնուկի կինը (Հայտն. 19:7) Հարս-խոսքն է և նա ոչ մի ընդհանուր բան չունի անձնական մեկնությունների հետ (2 Պետրոս 1:20): Հայտն. 21:4 համարում Հովհաննեսը տեսավ, որ նոր Երուսաղեմն իջնում է իր փեսայի համար զարդարված հարսի պես: Սուրբ քաղաքը պարիսպ ունի տասներկու դարպասներով, որոնց վրա գրված են Իսրայելի տասներկու ցեղերի անունները: Պարիսպը տասներկու հիմք ունի, որոնց վրա գրված են Գառնուկի տասներկու առաքյալների անունները:

Կարևոր է նաև իմանալ, որ Փրկիչը միայն մեկ Եկեղեցի ունի, որը Իր Սարմինն է (1 Կորնթ. 12:12-31), որը Ինքն է կառուցել (Մատթ. 16:16-18) և փրկագնել Իր արյունով (Եփես. 1:7), «Կորպեսզի եկեղեցին իր առաջ փառավոր կանգնեցնի, որ որ մի արատ կամ խորշոմություն կամ ուրիշ բաներ չունենա, որ սուրբ ու անարատ լինի» (Եփես.5:27):

Ժամի պատգամը նախորդում է Քրիստոսի վերադարձին

Սա ամենակարևոր ժամանակաշրջանն է Հիսուս Քրիստոսի Եկեղեցու համար: Փրկության ծրագրի հետ կապված Մաղաքիա 4:5-ի խոստումը, որը մեր Տերը հաստատեց Մատթ. 17:11 և Մարկ. 9:12 համարներում իրականացավ մեր ժամանակներում, մեր աչքերի առաջ: Դրանով վարդապետական տեսանկյունից ամեն բան վերականգնվեց իր սկզբնական վիճակին, և երանի այն աչքերին, որոնք դա տեսնում են: Իրականացան մեր Տիրոջ այս խոսքերը. «Ճշմարիտ է, առաջ եղիան պիտի գա և ամեն բան վերականգնի» (Մատթ. 17:11) և այսօր Նա կարող էր վկայել. «Եղիան եկավ և ամեն բան վերականգնեց»:

Մաղաքիա 3:1 համարի խոստման համաձայն Հովհաննես Սկրտիչը, որպես Աստծո մարդ, եկավ Քրիստոսի առաջին գալստից առաջ: Մեր Տերը դա հաստատեց Մատթ. 11:10 համարում. «Ահա ես իմ հրեշտակին ուղարկում եմ Քո առջևից, որ Քո առաջ Քո ծանապարհը պատրաստի» (Մատթ.11:10): Նույն կերպ մեր ժամանակներում եկավ Ուիլյամ Բրանհամը որպես Աստծուց ուղարկված մարդ, Մաղաքիա 4:5,6 համարների համաձայն և բերեց վերականգնման պատգամը՝ պատրաստելու համար ծանապարհը Քրիստոսի երկրորդ գալստից առաջ: Դա խոսքի բոլոր խորհուրդների հայտնությունն է ընդհուպ մինչև յոթ կնիքների բացումը, այլ կերպ ասած՝ Աստծո փրկության ողջ ծրագրի զարգացումը: Եթե պատգամաբեր չլինեք, պատգամ չէր լինի: «Որովհետև Տեր Եհովան ոչ մի բան չի անի, եթե չհայտնի Իր խորհուրդը Իր ծառաներին՝ մարգարեներին» (Ամովս 3:7):

Մինչդեռ այսօր հարցն այն չէ, թե արդյոք հավատում ենք, որ իրականացել է Մաղաքիա 4:5,6-ում գրվածը: Այժմ ամենակարևորն այն է, որ իմանանք, թե արդյոք ապրում ենք այն ամենը, ինչ պատգամաբերը հայտնել է իր քարոզներում: Գոհանում ենք Աստծուց, որ իր Ծնորհքով կարող ենք հավատալ Նրա ամեն խոսքին: Մեր Տերն ասել է. «*Եթե դուք իմ խոսքի մեջ մնաք, ձյնարտապես իմ աշակերտներն եք: Եվ ճշմարտությունը կձանաչեք և ճշմարտությունը կազատի ձեզ*» (Յովհ.8:31,32):

Մեկ բառի ողբերգական բացթողումը

Սա պետք է պարզ ասվի ևս մեկ անգամ. Բրանհամ եղբայրը բազմիցս վկայել է, որ 1933 թվականի հունիսի 11-ին մկրտությանը բոլոր ներկա գտնվողների համար տեսանելի լույսի մեջ իրեն ասվեցին հետևյալ խոսքերը. «**Ինչպես Յովհաննես Մկրտիչն ուղարկվեց Քրիստոսի առաջին գալստից առաջ, այնպես էլ քեզ տրված պատգամը կնախորդի Քրիստոսի երկրորդ գալստին**»: Իրեն ասված այս խոսքերը նա իր քարոզներում կրկնել է 17 անգամ, նույնիսկ ավելացրել է առողջ դատողությամբ օժտված յուրաքանչյուր մարդու համար շատ պարզ և հասկանալի ձևով. «**Ոչ թե ես եմ սուրհանդակը, այլ պատգամն է լինելու սուրհանդակը**»: Ավելի պարզ և ավելի կոնկրետ չէր կարող ասվել:

Սարգսրեի մահից հետո միտումնավոր փոխված տարբերակն այսպիսին է. «**Ինչպես Յովհաննես Մկրտիչն ուղարկվեց որպես սուրհանդակ Քրիստոսի առաջին գալստից առաջ, այնպես էլ դու կնախորդես Նրա երկրորդ գալստին**»: ԱՄՆ-ի եղբայրները այդպես են քարոզել ամենուրեք, հրատարակել են իրենց գրքերում, նույնիսկ փորագրել են տվել Թուսոնում գտնվող Բրանհամ եղբոր նոր տան դռան վրա: Ամենակարևոր բառը՝ «պատգամը», որը պիտի նախորդեր, գրված չի: Կեղծված տեքստը գրված է նաև Բրանհամ եղբոր գլխավերևում գտնվող կրակի սյան լուսանկարի տակ, որի առջև վերջերս ֆանատիկները նույնիսկ հավաքույթ են անցկացնում:



Մեկ բառ էլ ավելացվի կամ պակասեցվի, դրանով սատանան կարողանում է միշտ իմաստն աղավաղել և կեղծել: Աստծո ամեն ճշմարիտ զավակ Աստծո խոսքը թողնում է ձիշտ այնպես, ինչպես դուրս է եկել Աստծո բերանից, այդ թվում նաև գերբնական Լույսի միջոցով Բրանհամ եղբորն ասված խոսքերը:

Այժմ կպարզվի, թե մենք **իրոք հավատում ենք և ընդունում ենք** այն, ինչ Տիրոջ հրեշտակն ասաց 1933 թվականի հունիսի 11-ին, թե հավատում ենք **կեղծված տարբերակին**: Նա, ով ճշմարտությանը չի հավատում, այս դեպքում նույնպես Աստծո կողմից դատապարտված է ստությանը հավատալու (2 Թես. 2:11): Միայն մաքուր խոսքն է ճշմարտությունը, ամեն տեսակի փոփոխություն կեղծիք է: Մնում է այս փաստը՝ «*ոչ մի ստություն ճշմարտությունից չէ*» (1 Յովհ.2:21): Ինձ միշտ հարցնում են, թե կարող եմ լքել իրադարձությունների սխալ զարգացման վերաբերյալ: Ես գիտակցում եմ Աստծո առաջ ունեցած իմ պատասխանատվությունը, բայց ոչինչ չեմ կարող փոխել. դա կարող է միայն Աստված:

Հարուցյալ Տերն Իր թափանցող ձայնով ինձ պատվիրեց *քարոզել Իր Խոսքը*: Ես հենց այդ եմ արել հիսուն տարուց ավելի: Եվ Տիրոջ պատվիրանի համաձայն նաև բաժանել եմ հոգևոր կերակուրը, որը Բրանհամ եղբայրը հավաքել էր, որը գտնվում էր իր քարոզներում: Բրանհամ եղբայրը այդ երկու հանձնարարությունները հաստատեց հայտնությամբ և այդ նույն առիթով օրհնություն խնդրեց ինձ համար ձեռնադրությամբ: Այս ծառայությունը ուղղակիորեն կապված է մարգարեի ծառայության, ժշմարիտ պատգամի և Աստծո հետ: Ես ընտրյալների հետ հավատում եմ 1933 թվականի հունիսի 11-ին ասված խոսքերին. **«„ այնպես էլ դու կուղարկվես մի պատգամով, որը կնախորդի Քրիստոսի երկրորդ գալստին»**: Մենք կեղծված տարբերակը մերժում ենք՝ այն համարելով սատանայի մոլորություն: Դա օգտագործում են հաճախ, որ արդարացնեն պատգամը տարածողին մերժելը: **Որովհետև նա, ով հավատում է, որ Բրանհամ եղբայրն է սուրհանդակը, չի կարող հավատալ, որ նրա մահից հետո նրա բերած պատգամը սուրհանդակ կլինի Քրիստոսի երկրորդ գալստից առաջ**:

Յոգու պարզանների չարաշահման ողբերգական հետևանքը

Որպես հավելում՝ կատարվեց երկրորդ դեպքը, որպես ցավալի դաս:

1949 թվականի մայիսին Համբուրգում լրիվ Ավետարանի եկեղեցում Սուրբ Յոգու մկրտության փորձառությունն ունենալուց հետո մի շարք օրհնյալ հավաքույթներ ունեցա ազատ հոգեգալստական եկեղեցիներում: Քարոզից հետո բոլորս սպասում էինք, թե ինչ կասեր Սուրբ Յոգին Յոգու պարզանների միջոցով՝ լեզուների, թարգմանության և մարգարեության:

Հիսունական թվականներին մենք ընդունեցինք պատգամը և թույլ տվեցինք, որ այն շտկի մեզ բոլոր վարդապետական հարցերում, ինչպես Բրանհամ եղբայրն էր քարոզել սուրբգրային ձևով, լինի դա Աստվածության, մկրտության, Տերունական Ընթրիքի թե այլ թեմայի վերաբերյալ: Եկեղեցին մեծացավ և մենք շարունակեցինք տեսնել Յոգու գործողությունները: Քարոզից հետո բոլորը սպասում էին, թե ինչ մարգարեություններ են ասվելու: Իրոք, գրված է. *«Մարգարեությունները մի արհամարհեք»*, բայց նաև գրված է. *«Ամեն բան փորձեք, բարին ամուր բռնեք»*: Երբ եղբայրներին և քույրերին իրենց անուններով կանչում էին, որ աղոթեն նրանց համար, մենք կարծում էինք, թե կատարվում է նույնը, ինչ Բրանհամ եղբոր ժամանակ. իր հավաքույթների ժամանակ, աղոթքի շարքում լինում էին մարդիկ, որոնց նա չէր ձանաչում, և Աստված տեսիլքով նրան ցույց էր տալիս, թե ինչ է նրանց անունը, որտեղից են եկել և ինչ հիվանդությամբ են տառապում: Մինչդեռ մեր դեպքում, ինչպես հետագայում իմացանք, պարզև ունեցող քույրը ձանաչում էր եղբայրներին և քույրերին, ում կանչում էր: Ոչ մեկի մտքով չանցավ, որ ինչ-որ կեղծ բան, ինչ-որ նմանակում էր սողոսկել մեզանում:

Ի վերջո մի մարգարեության ժամանակ ինձ հրավիրեցին ծառայության համար ընծայելու մի ամուսնական զույգի: Ես դա արեցի առանց վարանելու: Հետո եկավ շաբաթ օրը, 1978 թվականի նոյեմբերի 18-ը: Մոտ ժամը տասն էր, երբ Տերը խոսեց ինձ հետ Իր զորավոր և հրամայական ձայնով. **«Իմ ծառա, քննիր Գործք առաքելուցը և տես, թե որևէ տղամարդ երբևէ ծառայության կանչվել է իր կնոջ հետ»**:

Ես անմիջապես ձեռքս վերցրի Աստվածաշունչը և քննեցի Գործք Առաքելուց գիրքը, ինչպես Տերը պատվիրել էր ինձ: Եվ ես պետք է ընդունեի, որ ոչ մի առաքյալ երբեք չի կանչվել ծառայության իր կնոջ հետ միասին, նույնիսկ աղքատների համար հոգ տանող այն յոթ ծառայողները կանչվեցին առանց իրենց կանանց: Միայն եղբայրներն են հաստատված եղել հինգ ծառայություններում՝ որպես առաքյալ, մարգարե, վարդապետ, հովիվ և ավետարանիչ: Հենց որ այդ մասին ասացի պարզև ունեցող այդ քրոջը, նրա վերաբերմունքը փոխվեց. փոխանակ հնազանդվելու Աստծո զորավոր ձեռքի տակ և ուղղվելու, սատանայի կատաղությունը բորբոքվեց իմ դեմ: Սպառնացին կործանել ինձ, իմ ծառայությունը և ողջ գործը: Այդ պահից Աստծո ծառային սկսեցին անվանել շնացող, խաբեբա, մոլորեցնող, նույնիսկ

հակաքրիստոս և ուրիշ շատ բաներ: Ծատերի կողմից գնահատվող մարգարեության պարզևի պատճառով շատերը լսեցին այդ քրոջը և հավատացին նրան, նույնիսկ Միացյալ Նահանգների և Կանադայի եղբայրները:

1979 թվականի մայիսից շատերը այդ կնոջ հետ լքեցին եկեղեցին, միայն մի փոքր խումբ հավատարիմ մնաց, և միսիոներական գործը մեծ վնասներ կրեց աշխարհով մեկ: Այդ ժամանակ ես պատգամն արդեն քարոզել էի 85 երկրներում: Թվում էր, թե ամեն բան ավարտված է իմ ծառայության համար: Ահա թե ինչու ուզում էի կյանքիս վերջ տալ Հյուսիսային ծովի մակընթացության ավիքներում, 1979 թվականի հունիսի 16-ին: Բայց մի հարց էր վառվում իմ կոտրված սրտում, և ես աղոթեցի. «Սիրելի Տեր, ես հիմա գալիս եմ Քեզ մոտ, ասա, թե ինչու դա կատարվեց ինձ հետ»: Հենց հաջորդ պահին իմ աջ կողմում ուղղահայաց կերպով իջած որոտի միջից, որը գնալով ավելի էր ուժեղանում, լսվեցին ինձ ուղղված Աստծո խոսքերը ամեն բան թափանցող հնչողությամբ. «Որովհետև դու լսեցիր քո կնոջ ձայնին»: Դա ճշմարիտ է նույնքան, որքան այն, որ Աստված կենդանի է:

1962 թվականի ապրիլի 2-ին, ինչպես պատգամի մեջ բոլորին հայտնի է, Տերը հրամայական ձայնով ինձ կոնկրետ հանձնարարություններ տվեց իմ ծառայության վերաբերյալ՝ գնալ ուրիշ քաղաքներ Իր Խոսքը քարոզելու, տեղական եկեղեցիներ չհիմնել, երգարան չհրատարակել և այլն: Հետագա տարիների ընթացքում Նա նորից ինձ հետ խոսեց լսելի ձայնով, ամեն անգամ, երբ անհրաժեշտ էր լինում կարևոր որոշում ընդունել, ինչպես որ գրվել է շրջաբերական նամակներում: Մինչդեռ այս անգամ Աստծո բարկությունը զգացվում էր ինձ բառերից յուրաքանչյուրում, որոնք ինձ ուղղված էին որպես հանդիմանություն, որոտի ձայնով: Ծանթահարվածի պես ընկա գետնին, ձախ կողմի վրա: Երբ տուն վերադարձա, ծնկի եկա, բացեցի Աստվածաշունչը և հայացքս ընկավ նույն խոսքերի վրա, Ծմնդոց 3:17-ում գրված խոսքերի, որոնք Աստված ասել էր Ադամին:

Ես հասկացա, որ ինձ ուղղված Աստծո հանդիմանությունը նույնքան անհրաժեշտ էր, որքան Ադամին ուղղվածը, ով լսել էր Եվայի ձայնին, երբ նա ընկել էր օձի ազդեցության տակ: Պողոսը դրա վերաբերյալ գրում է. «Որովհետև առաջ Ադամն ստեղծվեց, և հետո՝ Եվան: Եվ Ադամը չխաբվեց, բայց կինը խաբվելով՝ մեղք գործեց» (1Տիմ.2:13,14):

Ինչպես այն ժամանակ մարմնավորապես երկու բոլորովին տարբեր սերմեր հայտնվեցին այն գայթակղության միջոցով, որի մեջ Եվան ընկավ, նույնը հիմա կատարվում է հոգևոր ոլորտում, Եկեղեցում: Ոմանք, օրինակ, գոհանում են Աստծո կոչման և ծառայության շարունակության համար, իսկ ուրիշները մերժում են և ծաղրում: Ոմանք ուրախանում են, որ պատգամը տարածվում է աշխարհով մեկ, մյուսները կարծում են, որ Բրանհամ եղբոր հետ ամեն բան վերջացավ:

Մինչդեռ որքան հաստատ է, որ սկզբում առաջին անկումը կար Աստծո ծրագրում, նույնքան հաստատ է, որ շնորհիքի ժամանակաշրջանի վերջում ամեն բան Աստծո թույլատրող կամքի մեջ է: Եթե չլինեք սկզբնական անկումը, որը տեղի ունեցավ Եվայի գայթակղության միջոցով, աշխարհի ստեղծումից առաջ հաստատված փրկության ծրագիրը չէր կարող իրականանալ: Եթե մեր ժամանակներում չլինեք այն, ինչ կատարվեց Աստծո միջամտությամբ, հնարավոր չէր լինի Հարս-Եկեղեցու կատարելությունը Խոսքի կատարյալ մաքրությամբ և Հոգու գործողությամբ: Վերականգնված Եկեղեցում ամեն բան կարգուկանոնով պիտի լինի, նաև հինգ ծառայություններն ու Հոգու պարզները: Ինչպես Բրանհամ եղբայրը հաճախ շեշտել է՝ վկայակոչելով Եվային, սկզբնական մեղքը եղել է անհավատությունը: Միայն այն ժամանակ, երբ Եվան ականջ դրեց օձին, որը կասկածի տակ էր դնում այն, ինչ Աստված ասել էր Ադամին, էլ ուրիշ ոչինչ չէր կարող անել, քան հավատալ սատանայի ստին: Դա նույն կերպ կատարվեց մեր ժամանակներում: Նախ, սատանան կասկածի տակ դրեց Աստծո ծառայի կոչումը և այն, ինչ նրան ասվել էր կանչվելու պահին, և հետո իր փաստարկները ճշմարտանման դարձրեց: Այսպես է տեղի ունեցել գայթակղությունը սկզբում, այդպես է լինելու մինչև վերջ:

Եթե սկզբնական անկումը դրախտում տեղի ունեցած չլիներ, մենք երբեք չէինք իմանա փրկության ծրագրի մասին: Ամեն բան նախասահմանված է եղել աշխարհի հիմնումից առաջ: Մեր անուններն էլ աշխարհի հիմնումից առաջ են գրվել Գառան Կյանքի Գրքում (Հայտն. 13:8): Բայց գայթակղության պահից սկսված, չար սերմ սերմանվեց աշխարհում, թշնամություն ծնվեց երկու սերմերի մեջ (Ծննդոց 3:15), ատելություն, որն անցնում է մահվան սահմանից այն կողմ: Գայթակղվածների մեջ հաշտության ոչ մի նշան չի երևում: Այն պահից, երբ այդ սահմանը հատվում է, թվում է, թե վերադարձ չկա: Այնուամենայնիվ Տիրոջը պետք է թողնենք վերջնական դատավճիռը: Բայց Կայենը՝ չար սերմը, որին Եվան լույս աշխարհի բերեց գայթակղության միջոցով, չընդունվեց Աստծո կողմից, այլ միայն Աբելն ընդունվեց իր գոհի հետ: Աստված ընդունում է միայն իր սերմը, իսկապես վերստին ծնված իր որդիներին և դուստրերին: Բարի սերմը Թագավորության որդիներն են, ցորենը: «Սերունդը ծառայելու է նրան..» (Սաղմ. 22:30):

Հունձքը հասել է, և Տերն իր շտեմարանում միայն ցորենն է հավաքելու (Մատթ. 3:12): Ծնորհակալ եմ իմ Աստծուն, ով ինձ ցույց է տվել ցորենի արտը լիովին հասած, և այնտեղ ոչ մի որոմ չկար: Մատթ. 13:39-43 համարներում մեր Տերն ասել է, որ առաջին հերթին որոմն է հավաքվելու: Խոսք-Սերմը ցանվել է և բացահայտվել Հարս-Եկեղեցուն բոլոր պատկանողների մեջ, ու հիմա սպասում է իր կատարյալ հասունացմանը: Դա ձիշտ է, շուտով կարող ենք ասել միմյանց. «Ուրախանանք ու ցնծանք ու փառք տանք Նրան, քանի որ հասավ Գառնուկի հարսանիքը, ու Նրա կինը ինքն իրեն պատրաստեց» (Հայտն. 19:7):

Վերջնական է ադ որոշումը

Գայթակղության մեջ մնացողները շրջանցում են այն, ինչ Աստված անում է ներկայումս: Կեղծված տարբերակի համաձայն նրանք հավատում են, որ պատգամն ավարտվել է մարգարեի հետ, Քրիստոսի երկրորդ գալստից առաջ: Նաև մերժում են այն կոչումը, որը Տերն է տվել, ու մարգարեն հաստատել է: Նրանց համար ամեն բան վերջացել է, և նույնիսկ ոմանք հաստատում են, որ Գառնուկը լքել է շնորհաց աթոռը, Տերը վերադարձել է պահանջելու իրենցներին և այլ նման բաներ: Սինչդեռ, գոհություն Աստծուն, ճշմարիտ պատգամը դեռ քարոզվում է Աստվածաշնչի համաձայն, և մարգարեի ասածները ներդաշնակ կերպով դասավորված են իրենց տեղում: Սուրբ Գիրքը Բրանհամ եղբոր «բացարձակ հիմքն» էր, նաև մեր միակ բացարձակ հիմքն է:

Բրանհամ եղբայրը հարյուրավոր անգամներ մեջբերել է Հայտն. 22:18,19 համարները և շեշտել է, որ ոչ մի բառ չի կարող պակասեցվել և ավելացվել, և Եվայի դեպքում էլ սատանան միայն մեկ բառ ավելացրեց մահ բերելու համար: Պողոսը նախանձախնդիր էր Աստծո նախանձախնդրությամբ, որ Եկեղեցուն ներկայացնի Քրիստոսի առաջ որպես մաքուր կույսի: «Սակայն վախենում եմ, որ ինչպես օձն իր խորամանկությամբ խաբեց Եվային, այնպես էլ ձեր մտքերը ապականվեն Քրիստոսում եղող պարզությունից» (1 Կորնթ. 11:3): Նա, ով ինչ-որ բան է ավելացնում կամ պակասեցնում Աստծո խոսքից, գտնվում է օձի ազդեցության տակ, մոլորված է և ոչ մի բաժին չունի Կենաց ծառից: Արժե ամենայն լրջությամբ կարդալ այն, ինչ Բրանհամ եղբայրն է ասել այդ թեմայով: Ահա բազմաթիվ մեջբերումներից երեքը: 1965 թվականի փետրվարի մեկին նա ասել է. «Եթե մեկն ինչ-որ բան պակասեցնի այս Գրքից կամ ավելացնի, Աստված նրա անունը կջնջի Կյանքի Գրքից»: 1962 թվականի նոյեմբերի 12-ին ասել է. «Դա ցույց է տալիս, որ եթե անունը գրված էլ լինի, կջնջվի»: Եվ 1965 թվականի ապրիլի 18-ին՝ «Մենք ուզում ենք այն, ինչ Աստված ասել է սկզբում: Եթե մեկը մի բան ավելացնի կամ պակասեցնի, նրա անունը կջնջվի Կյանքի Գրքից»: Մատթ. 4:4 համարում մեր Տերը պատասխանեց փորձիչին. «Գրված է. «Մարդ ոչ միայն հացով է ապրում, այլ այն ամեն խոսքով, որ Աստծո բերանից է դուրս գալիս»:

Աստված առաջնորդեց այնպես, որ նույնիսկ դժվարըմբռնելի մեջբերումները կարողացա դասավորել Սուրբ Գրքի համաձայն: Ոչ մի խնդիր չի լինի նույնիսկ Հայտնության 10-րդ գլխի հետ կապված, եթե նախ կարդանք 8-րդ, 9-րդ գլուխները, հետո 11-րդ գլուխը: Միշտ Նույն Անձն է, որը հայտնվել է Մովսեսին և Իսրայելի ժողովրդին ամպով և կրակի սյունով և առաջնորդել է նրանց 40 տարվա ընթացքում (Ելից 40:34-38): Նա Նույնն է, ով ամպի մեջ հայտնվել է Բրանհամ եղբոր ծառայության ընթացքում, երբ մարգարեն դեռ երկրի վրա էր, 1963 թվականի փետրվարի 28-ին, երբ յոթ զորեղ որոտները ցնցեցին ողջ շրջանը: Նա Նույնն է, որ իջավ որպես Ուխտի Հրեշտակ Հայտնության 10-րդ գլխում և Իր ոտքը դրեց ցամաքի և ծովի վրա: Մենք անսահման շնորհակալ ենք, որ մեր հավատարիմ Աստվածը մեզ իմաստություն է տվել հասկանալու կատարյալ համապատասխանությունը գրված Խոսքի և բերված պատգամի միջև:

Կեղծ մեկնությունները չեն կարող դասավորվել աստվածաշնչյան ձևով: Բոլոր նրանք, ովքեր տարածում են օտար ուսմունքներ, միաբան են մեկ հարցի շուրջ՝ կործանել Աստծո կողմից հաստատված ծառայի ազդեցությունը, զրպարտության միջոցով նրան ներկայացնել որպես անվստահելի՝ սեփական ծրագրերն իրականացնելու համար: **Նաև մեկ այլ ընդհանուր բան ունեն՝ հավատում են, որ կեղծված տեքստը ճշմարիտ է, իսկ ճշմարիտը՝ կեղծ:**

Չնայած ամեն ինչին՝ Տերը կառուցում է Իր Եկեղեցին, և դժոխքի դռները չեն հաղթի նրան: Պատգամի մեջ միայն մեկ ճշմարիտ Եկեղեցի կա. դա Հարս-Խոսքն է: Բոլոր նրանք, ովքեր հավատում են ինչ-որ հատուկ հայտնությունների և մեկնությունների, գտնվում են չարի ազդեցության տակ, Խոսքից դուրս են և չեն պատկանում Հարս-Եկեղեցուն: Բայց ողջ աշխարհում Աստծո բոլոր ճշմարիտ գավակները, ովքեր ընկել էին կործանելու նպատակ ունեցող զործողությունների վատ ազդեցության տակ, կգտնեն վերադարձի ճանապարհը և կհավատան, որ մարգարեի բերած պատգամը դեռ նախորդում է Քրիստոսի երկրորդ գալստին, մինչև վերջին մարդը կանչվի:

Բազմիցս Բրանհամ եղբայրն ասել է. շատերն են խոսում այն մասին, թե ինչ է արել Աստված և սպասում են, թե ինչ է Նա անելու, բայց շրջանցում են այն, ինչ Նա անում է հիմա: Մինչդեռ, այն, ինչ Նա արդեն արել է, կապում է մեզ այն բանի հետ, ինչ հիմա է անում և պատրաստում է այն բանին, ինչ Նա անելու է հետո:

Գողգոթայի հաղթողը ավարտին է հասցնում Իր փրկագնման գործը Իրենների հետ: Վերջում կկատարվի այն, ինչ Պողոսն արդեն ասել էր իր առաջին միսիոներական ճանապարհորդության ժամանակ՝ դիմելով չհավատացողներին. **«Տեսեք, անարգողներ և զարմացեք և կործանվեք, քանի որ ես ձեր օրերում մի գործ եմ կատարում, մի գործ, որի մասին, եթե մեկը ձեզ ասեր, երբեք չպիտի հավատայիք»** (Գործք 13:41):

Ի՞նչ էր վկայակոչում Պողոսը, երբ համեմատում էր անարգողների հետ. Թվոց 16-րդ գլուխը, երբ հայտնի մարդիկ ապստամբեցին Մովսեսի և Ահարոնի դեմ: Մովսեսը երեսնիվայր ընկավ, աղոթեց և ասաց. **«Ուրեմն դու և քո բոլոր խումբը Տիրոջ դեմ եք հավաքվել. և Ահարոնն ո՞վ է, որ նրա դեմ տրտնջում եք»** (Թվոց 16:11):

Մովսեսը նրանց գալու հրավեր ուղարկեց, բայց նրանք չցանկացան գալ և ասացին. «Այս մարդկանց աչքերը հանելով՝ ես»: Պատմությունը շարունակվեց, այնուհետև Մովսեսը Կորխի մարդկանց անվանեց «չար մարդիկ» և արձակեց դատավճիռը. **«+ այն ժամանակ կիմանաք, որ այս մարդիկ անարգել են Տիրոջը»** (Խ. 30): Հետևաբար նրանք անարգեցին ոչ թե մարգարեին, ոչ թե մարգարեի խոսքերը ներկայացնողին, այլ անարգեցին Տեր Աստծուն: Այստեղ կարևոր դաս կա: Մովսեսը կարող էր ասել. **«Ինձ եՍ եՍ-ն է ուղարկել ձեզ մոտ»:** (Ելից 3:14): Նա կոչում էր ստացել, հանձնարարություն փրկության պատմության հետ կապված և պետք է Աստծո խոսքերը դներ Ահարոնի բերանում (Ելից 4:15): Անարգողները ոչ թե Մովսեսին և Ահարոնին անարգեցին, այլ ծաղրեցին և անարգեցին Աստծուն:

Դա ակնարկեց Պողոսը, երբ խոսեց անարգողների մասին՝ կապված այն գործի հետ, որն Աստված անելու է մեր օրերում: Անկասկած, այդ խոսքը գրված է մեր ժամանակների համար: Անարգում են ոչ թե պատգամաբերին, ոչ թե պատգամը տարածողին, այլ Աստծուն, ով հանձնարարություն է տվել փրկության ծրագրի հետ կապված: Նա, ով իրոք հավատում է մարգարեի ստացած հանձնարարությանը, չի կարող չհավատալ, որ պատգամն իրականացնելու է այն, ինչի համար ուղարկվել է: Նա ով չի հավատում Աստծո կողմից տրված կոչմանն ու հանձնարարությանը, անարգում է Աստծուն, ում բերանով ասվել է այդ հանձնարարությունը:

Որքան որ ձիշտ է, որ Աստված ամեն բան ստեղծեց իր ամենակարող խոսքով և ավարտեց արարչագործությունը, նույնքան ձիշտ է, որ Նա հիմա ավարտին է հասցնում փրկագնման գործը խոստումների համաձայն և Սուրբ Հոգու զորությամբ, իր արյունով գնված անդրանիկների եկեղեցում: *«Որովհետև Տերն արդարությամբ մի կարծ ու համառոտ բան կանի. Տերը երկրի վրա մի վճռական բան կանի»* (Հռոմ. 9:28):

Վերջին փուլում, երբ առաջին ու վերջին անձրևները միասին թափվեն, երբ Սուրբ Հոգու վերջնական գործողությունը կկատարվի, և Աստծո զորությունը կդրսևորվի տեսանելի կերպով, բոլոր ճշմարիտ հավատացյալները մեկ սիրտ և մեկ հոգի կլինեն պատգամի մեջ, խոսքի մեջ և Աստծո կամքի մեջ, ինչպես եղել է սկզբում Պենտեկոստեի ժամանակ:

Այն, ինչ Պողոսը գրել է Հռոմ. 8:31-39 համարներում, վերաբերում է ընտրյալներին, որոնք չեն կանգնում մեղադրողի կողքին: *«Ուրեմն ո՞վ կարող է որևէ մեղադրանք բերել Աստծո ընտրյալների դեմ: Աստված Ինքն է, որ արդարացնում է»* (Հռոմ. 8:33): Հաղթողները մնում են Գառնուկի արյան, խոսքի և իրենց վկայության ներքո: Նրանք հավատում են յուրաքանչյուր խոսքին, առաջին գլխից մինչև վերջին գլուխը, ներառյալ այն, ինչ գրված է Մաղաքիա 4-րդ գլխում, Դուկաս 17-րդ գլխում, Մատթ. 24:14 և 24 համարներում, նաև 45-47 համարներում, Մատթ. 25:1-10 համարներում կամ էլ Հայտնության 10-րդ գլխում:

Դժբախտաբար չարախոսն ու ողջ աշխարհին մոլորեցնողը ցած չի գցվի, քանի դեռ վերջը չի եկել: Այնուամենայնիվ ընտրյալները չեն կարող մոլորվել: Հափշտակության և Թագավորության հռչակման պահին կատարվում է Հայտն. 12:7-11 համարներում գրվածը. *«Եվ մեծ ձայն լսեցի, որ երկնքում ասում էր. «Հիմա փրկությունը, զորությունն ու թագավորությունը մեր Աստծուն եղավ, իշխանությունն էլ նրա Օծյալինը եղավ, որովհետև ցած գցվեց մեր եղբայրների չարախոսը, որ գիշեր-ցերեկ Աստծո առաջ չարախոսում էր նրանցից: Եվ նրանք հաղթեցին նրան Գառան արյունով ու իրենց վկայության խոսքով և իրենց անձերը չսիրեցին մինչև մահ»* (Հայտն.12:11):

Վերջին ժամանակաշրջանը

Երեկոյան ժամանակ լույսը հայտնվեց: Գերբնական լույսը հստակ կերպով լուսավորում է աստվածաշնչյան հիմք ունեցող ամեն վարդապետություն. այդպիսով մենք կարողանում ենք քայլել բացահայտված խոսքի լույսի տակ: *«Որովհետև Աստված, որ ասաց, թե խավարից լույս ծագի, ինքը մեր սրտերի մեջ ծագեցրեց՝ Աստծո փառքի գիտության լույսը տալու Հիսուս Քրիստոսի դեմքով»* (2 Կորնթ.4:6): Ամեն:

Տերն իր մոտ տարավ իր ծառային ու մարգարեին, երբ ավարտվեց նրա ծառայությունը, բայց բացահայտված խոսքը մնաց մեզ հետ: Դա այն պատգամն է, որը հասել է մինչև երկրի ծայրերը: Աստված ամեն բանի համար հոգ տարավ և Տերն իր վերադարձի օրը կատարելության կհասցնի իր կանչած եկեղեցուն և կկանգնեցնի իր սուրբ երեսի առջև առանց որևէ արատի (Եփես. 5:27, Կողոս. 1:22 և այլ համարներ):

Աստված ինձ մեծ առանձնաշնորհում է տվել մասնակցելու Բրանհամ եղբոր հավաքույթներին Գերմանիայում և Միացյալ Նահանգներում: Ես ականատես և վկա եմ այդ գերբնական ծառայության: Գիտեմ նաև, որ նա սպասում էր, որ կատարվեն բաներ, որոնք դեռ լինելու են: Դրա համար մի մտահոգվեք. այն, ինչ Աստված նախատեսել է Հարսի համար, կատարվելու է: Որովհետև Աստծո բոլոր խոստումները «Այո» են ու «Ամեն» Նրանում (2 Կորնթ. 1:18-22): Նրա ծառայությունը արժեքավոր էր բոլոր սուրբերի համար: Ինձ հատկապես

ուրախացնում է այն, որ հավատարիմ Աստված ինձ թույլ տվեց տեսնելու Բրանհամ եղբորը ամպի վրա հեռանալիս, երբ նա մահացավ, երբ ես այստեղ՝ Գերմանիայում էի և ոչինչ չգիտեի դեկտեմբերի 18-ին տեղի ունեցած ավտովթարի, ոչ էլ դեկտեմբերի 24-ին վրա հասած նրա մահվան մասին: Մեր Տերը համբարձվեց ամպի վրա (Գործք 1:9), Հարսը կգնա Տիրոջը դիմավորելու օդերում ամպերի վրա (1 Թես. 4:17), և երկու մարգարեները երկինք են բարձրանալու ամպի միջով (Հայտն. 11:12):

Ողջ աշխարհը գիտի, որ ես սերտորեն կապված եմ եղել Բրանհամ եղբոր և իր ծառայության հետ տասը տարի շարունակ: Ծատերը գիտեն նաև, թե Աստված Իր շնորհքով ինչ բաժին է ինձ տվել պատգամը տարածելու մեջ: Նա առաջնորդեց այնպես, որ մարգարեի հեռանալուց հետո Աստծո կանչի հիման վրա ես առաջինը կարողացա պատգամը տանել Եվրոպա, Ասիա, Աֆրիկա և աշխարհով մեկ:

Սա ասում եմ զուտ որպես տեղեկություն. Բրանհամ եղբոր կենդանության ժամանակ աշխարհը դեռ չէր լսել պատգամի մասին: Միացյալ Նահանգներից բացի կար ընդամենը երեք երկիր, որտեղ եղբայրները լսում էին Բրանհամ եղբոր քարոզները՝ Կանադայի Էդմոնտոն քաղաքում, Հենրի Մարտին եղբոր միջոցով, ումից վերցրել էի Բրանհամ եղբոր հասցեն, հարավային Աֆրիկայում Սիդնեյ Ջեքսոն եղբոր միջոցով և մեզ մոտ՝ Կրեֆելդում: Բրանհամ եղբայրն ինքը 1958 թվականի հունիսի 11-ին, Թեքսասի Դալլաս քաղաքում ինձ ասաց. «Ֆրանկ եղբայր, դու այս պատգամով կվերադառնաս Գերմանիա»: Բրանհամ եղբայրը 1962 թվականի դեկտեմբերի 3-ին կրկնեց այն, ինչ Տերն ինձ ասել էր ապրիլի 2-ին և ավելացրեց. «Ֆրանկ եղբայր, կերակուրը բաժանելու համար սպասիր, մինչև մնացածն էլ ստանաս»: Պատգամը կարող էր նախորդել Քրիստոսի վերադարձին միայն այն բանից հետո, երբ Տերն Իր մոտ տարավ Իր ծառային, որովհետև այդ ժամանակ էր պահեստավորված ողջ կերակուրը:

Ինչպես Աստված Իր մոտ տարավ Իր մարգարե Մովսեսին, նույնը կատարվեց Եղիայի և Բրանհամ եղբոր հետ: Մովսեսը տեսավ խոստացված երկիրը Նաբավ բարձունքից (2 Օրինաց 32:44-52), մինչդեռ Իսրայելի ժողովուրդն այնտեղ մտավ Հեսուփ առաջնորդությամբ: Հեսուփ համար ամենակարևորը Ուխտի տապանակն էր, որովհետև այնտեղ էր մարգարեին հայտնված խոսքը: Նույնը վերաբերում է մեզ այսօր: Մենք տանում ենք հայտնությամբ տրված խոսքը, մտնում ենք խոստացված երկիրը. խոսքի բոլոր զավակները հավատում են խոստումի խոսքին և կնքվելու են խոստացված Սուրբ Հոգով (Եփես. 1:13): Երբեք, երբեք Աստված Սուրբ Հոգով չի կնքի մեկին, ով մոլորության մեջ է:

Սկզբում, մինչև յոթանասունական թվականների վերջը ամեն քաղաքում միայն մեկ պատգամի եկեղեցի կար: Հիմա տարբեր քաղաքներում բազմաթիվ եկեղեցիներ կան, որոնք վկայակոչում են Բրանհամ եղբորը: Մի՞թե հնարավոր է, որ «հավատացյալները», որոնք չեն ուզում հաղորդակցվել իրար հետ, միասին պաշտամունքի կամ Տերունական Ընթրիքի մասնակցել, բոլորը միասին հետո մասնակցեն Գառան հարսանիքի ընթրիքին: Անկասկած, ո՛չ:

Բայց այսօր, այս շարադրանքից հետո բոլորը այստեղ և ողջ աշխարհում հնարավորություն ունեն շտկելու իրենց որոշումը: Այժմ, ինչպես Մովսեսի օրերում, կբացահայտվի, թե արդյոք պատկանում ենք դուրս գալու կանչված եկեղեցուն թե հետևում ենք Կորնելիսի ու Դաթանիսի, կամ էլ ինչպես Պողոսի ժամանակ՝ Հիմեոնիսին ու Փիղետոսին (2 Տիմ. 2:15-18): Այժմ կբացահայտվի, թե արդյոք որևէ եկեղեցու առաջնորդը մերժում է այս ժամին հանձնարարություն ստացած մարդուն, ինչպես, օրինակ, Դիոտրեփեսոսը, որը մերժում էր Հովհաննես առաքյալին: Մի պահ պատկերացրեք, եկեղեցու առաջնորդը մերժում է Հովհաննես առաքյալին (3 Հովհ. 9, 10): Ինչքան «Դիոտրեփեսներ» կան այսօր, որոնք իրենք իրենց հովիվ են համարում, բայց չեն դրվել Աստծո կողմից: Այն, ինչ մեր Տերն ասաց նրանց մասին, ում Ինքը կանչել և ուղարկել էր, մի՞թե ուժի մեջ չի մնում միշտ. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. «Ով որ ընդունի նրան, ում ես կուղարկեմ, ինձ է ընդունում, իսկ ինձ ընդունողը ինձ ուղարկողին է ընդունում» (Հովհ. 13:20): Դա է ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ:

Ես գիտեմ, որ իմ Փրկիչը ողջ է և գիտեմ, որ իմ գրած շրջաբերական նամակները անձնական չեն, այլ հասցեագրված են եկեղեցուն Աստծո կողմից: Տերն Ինքը հոգ կտանի, որ եկեղեցին կրկնակի հատուցում ստանա, ինչպես եղավ Հոբի հետ, երբ սատանան ամեն բան կործանեց (Հոբ 42, Հակոբ 5): Ժամանակը շատ մոտ է: Չնայած իմ մարդկային

տկարություններին և նեղություններին՝ ես իմ ծառայության մեջ ամեն բան արել եմ Աստծո պատվերով, նաև 2 Տիմ. 4:2-ում գրվածը. *«Խոսքը քարոզիր շարունակ՝ ժամանակին լինի, թե ժամանակից դուրս»* (2 Տիմ.4:2): Այս սուրբգրային հատվածը առանձնահատուկ կարևորություն ունի ինձ համար, որովհետև Տերն Ինքն է ինձ պատվիրել այն կարգալ 1980 թվականին և քարոզել միայն այն, ինչ գրված է Խոսքում: Սուրբգրային այս նույն խոսքերն ասվել են Բրանհամ եղբորը 1933 թվականին և նա այն դրել է Ջեֆերսոնյան խորանի անկյունաքարի տակ:

Իմ վկայությունը նույնն է, ինչ Պողոսինը. *«Որովհետև մենք մեզ չենք քարոզում, այլ Հիսուս Քրիստոսին՝ Տիրոջը, իսկ մեզ՝ որպես ձեր ծառաների՝ Հիսուսի համար»* (2 Կորնթ. 4:5):

Քրիստոսի վերադարձը մոտ է, այդ են ցույց տալիս վերջին ժամանակների նշանները: Կատարվում է նաև Մատթ. 24:14-ում գրվածը. *«Եվ արքայության այս Ավետարանը ամբողջ տիեզերքում կքարոզվի՝ բոլոր ազգերին վկայություն լինելու համար, և այն ժամանակ կգա վերջը»* (Մատթ.24:14):

Մենք այժմ ապրում ենք վերջին ժամանակաշրջանի սերնդում, Քրիստոսի վերադարձին նախորդող ժամանակում: Մեր աչքերի առջև կատարվում են աստվածաշնչյան մարգարեություններում կանխասված բաները՝ պատերազմեր, երկրաշարժեր, սովեր, դժվար ժամանակներ, բնական աղետներ և այլն: Տերը մեզ հայտնել է. *«Եվ երբ այս բաներն սկսեն լինել, վերև նայեցեք ու ձեր գլուխները բարձրացրեք, որովհետև ձեր փրկությունը մոտ է»* (Ղուկ.21:28):

Կես դար աշխարհով մեկ

Գոհունակությամբ հիշելով իմ առաջին միսիոներական ծամփորդությունը Հնդկաստանում՝ 1964 թվականի հոկտեմբերի 6-ին, կուզեի մի համառոտ անդրադարձ կատարել:

Այն ժամանակվանից բազմիցս քարոզել եմ այս մեծ երկրի 23 քաղաքներում, և եթե Տերը կամենա, կձեռնարկեմ իմ քսանհինգերորդ ծանապարհորդությունը այդ երկրում հոկտեմբեր ամսին:

Անցած հիսուն տարիների ընթացքում կարողացա Խոսքը տանել ավելի քան 140 երկրների 600 քաղաքներում. դրանցից մի քանիսը նշեմ՝ Մոսկվա, Պեկին, Կահիրե, Դամասկոս: Միլիոնավոր մարդկանց Խոսքը հասել է ռադիո և հեռուստահաղորդումների միջոցով, որոնք հեռարձակվում են բազմաթիվ երկրներում:

Աֆրիկյան մայրցամաքում հունձն առանձնահատուկ կերպով առատ է: Այնտեղ, բազմաթիվ քաղաքներում հազարավոր մարդիկ են հավաքվում կանոնավոր հավաքույթների համար:

Ինչպես բոլորին հայտնի է, 1974 թվականի ապրիլին կարողացանք բացել պաշտամունքների համար նախատեսված մեր սեփական շենքը: Հետո 1976 թվականի հուլիսի 18-ին Տերն ինձ ասաց Իր զորավոր ձայնով. *«Իմ ծառա, գնա հարևան տարածքը, հանձնիր այն ինձ և կառուցիր այնտեղ»:* Ես թփուտների միջով ինձ համար ծանապարհ բացեցի, ծնկի եկա և այն հանձնեցի Տիրոջը: Հետագա տարիների ընթացքում կառուցվեցին միսիոներական կենտրոնի շենքերը, որոնցում գտնվում են աշխատասենյակները, տպարանը, առաքման համար սենյակները, նաև ննջարանները նրանց համար, ովքեր հեռվից են գալիս ամենամսյա հավաքույթների համար:

Ըստ շնորհակալ եմ Աստծուն միսիոներական կենտրոնի համար: Յուրաքանչյուր ամսվա առաջին շաբաթ-կիրակին տեղի ունեցող հատուկ հավաքույթների ժամանակ գալիս են մարդիկ Եվրոպայից, նաև օվկիանոսի այն կողմից՝ Խոսքը լսելու համար, և ողջ աշխարհում հազարավոր մարդիկ հետևում են հավաքույթներին համացանցի միջոցով: Անկախ նրանից թե քարոզը որտեղ է՝ Կրեֆելդում, Ցյուրիխում, Լոնդոնում թե Փարիզում, ամենուրեք մարդիկ կարող են լսել և տեսնել, թե Աստված ինչ է անում ներկայումս: Ամովս 8:11-ում գրվածն իրականացել է

բառացիորեն: Աստված իր խոսքը լսելու քաղց է ուղարկել, և Տիրոջ սեղանն առատորեն լցված է:



Նաև շնորհակալ եմ բոլոր եղբայրների համար, որոնք թարգմանում են և բոլոր երկրներում գտնվող սպասավոր եղբայրների համար, որոնք մասնակցում են մաքուր հոգևոր կերակրի բաժանմանը: Այդպիսով կատարվում է Մատթ. 24:45-47 համարներում գրվածը, և ողջ աշխարհում Հարսը կարող է մասնակցել ազդարարմանը: Այս սուրբգրային համարը Տերն ինձ բարձրաձայն ասաց 1976 թվականի սեպտեմբերի 19-ին: Դա նույնքան ճշմարիտ է, որքան այն, որ Աստված կենդանի է:

1964 թվականի հուլիսի 5-ին «Գլուխգործոցը» քարոզում Բրանհամ եղբայրը պատմեց մի տեսիլքի մասին, որի ժամանակ Հարսը շարքից դուրս եկավ, հետո տեսավ, թե ինչպես նա վերադարձավ շարքի մեջ՝ համապատասխանելով յուրաքանչյուր խոսքին: Այժմ՝ այս ժամանակաշրջանում, մենք ունենք Աստծո ճշմարիտ և հստակ խոսքի ազդարարումը, և բոլոր նրանք, ովքեր պատկանում են Հարս-Եկեղեցուն, հավատում են խոսքին և պահում են: Հնչում է վերջին կանչը. «Ահա Փեսան գալիս է, ելեք Նրան դիմավորելու»: Ամեն:

49 տարի է անցել այն ժամանակվանից, երբ Բրանհամ եղբայրը գնաց Տիրոջ մոտ: Տերը պատվիրել էր Իսրայելին, որ հիսուներորդ տարվա ընթացքում, որը հորեյյանական տարին էր, բոլորը վերադառնան իրենց ունեցվածքին (Ղևտ. 25): Անցած 49 տարիների ընթացքում Տերը մեծ բաներ արեց անթիվ հավատացյալների համար: Բայց բոլորը սպասում են ավելիին՝ բոլորը փափագում են ապրել կատարյալ վերականգնումը, Հոգու վերջնական գործողությունը և կատարելությունը: Աստված հավատարիմ է: Նա մեր ժամանակներում էլ կարող է հիսուներորդ տարին դարձնել փրկության պատմության ամենազորավոր տարին: Մենք մեծ ակնկալիքներ ունենք, բայց Նա է որոշում ժամն ու ժամանակը: Փառք Նրան: Նա երբեք չի ուշանում: Ամեն:

Ներկա իրադարձությունների մասին մանրամասն չենք խոսի: Առանց այդ էլ ամեն օր լրատվամիջոցները մանրամասն պատմում են աշխարհում գտնվող տարբեր ձգնաժամերի և տագնապալի դեպքերի մասին: Մեր հայացքը հատկապես ուղղված է Մերձավոր Արևելքի և Երուսաղեմի վրա, այն քաղաքի, որը Տերն Ինքն է ընտրել: 3300 տարուց ավելի Երուսաղեմը եղել է հրեա ժողովրդի մայրաքաղաքը և Աստվածաշնչում հիշատակված է ավելի քան 700 անգամ, բայց ոչ մի անգամ հիշատակված չէ Ղուրանում: Աստված Ինքն է Աստվածաշնչում խոստացել, որ իր ժողովրդին տանելու է իրենց հայրերի երկիրը (Երեմիա 23:7-8, Եզեկիել 36:24-28, Միքիա 2:12-13, Սոփոնիա 3:19-20, Հաբարա 2:12-13) և կարող ենք վկայել, որ Նա կատարեց իր խոստումը: Կգա ժամանակ, երբ կկատարվի նաև Հաբարիա 14:16-21

համարներում գրվածը, և բոլոր ժողովուրդները, որոնք մնացած կլինեն վերջին մեծ ճակատամարտից հետո, կբարձրանան Երուսաղեմ Տաղավարների տունը նշելու:

Թող բոլորը վերջապես հասկանան, որ Իսրայելին կողմ կամ դեմ լինելու իրենց որոշման հետևանքը կարող է լինել կամ օրհնություն, կամ անեծք, ինչպես Տեր Աստված ասաց Աբրահամին. «Պիտի օրհնենք քեզ օրհնողներին և պիտի անիծենք քեզ անիծողներին, և երկրի բոլոր տոհմերը քեզնով պիտի օրհնվեն» (Ծննդոց 12:3):

Ամուր կառչենք ձձմարիտ պատգամից, որովհետև նրանք, ովքեր մինչև վերջ համբերեն, պսակ կստանան: Հռոմ. 11-րդ գլխի համաձայն՝ Աստված նախ Իր գործն ավարտում է հեթանոսների Եկեղեցու հետ, այնուհետև՝ Իսրայելի: Ամեն:

«Եվ Հոգին ու հարսն ասում են. «Ե՛կ»: Եվ լսողն էլ կասի. «Ե՛կ»: Նա, ով ծարավ է, թող գա, և նա, ով կամենում է, թող կյանքի ջուրը ձրի առնի»:

Գործելով Աստծո հանձնարարությամբ՝

Էվալդ Ֆրանկ



Անգղլայում մեծ եկեղեցիներ կան, որոնք կապված են մեզ հետ: Լուսանկարում հավատացյալները հետևում են Լոնդոնում հավաքույթի ինտերնետային հեռարձակմանը:



Օգոստոսին Ֆրանկ եղբայրն այցելեց Եթովպիա և Ռուանդա: Լուսանկարում հավաքույթ է Կիգալիում (Ռուանդա):





2014 թվականի հոկտեմբերի առաջին շաբաթ-կիրակին 15 երկրներից մոտ 1200 հավատացյալներ էին հավաքվել Կրեֆելդում: Ինչպես տեսնում եք նկարներում, գլխավոր դահլիճը և պատշգամբը լեփ-լեցուն են: Աջ կողմի լուսանկարում ճաշարանն է, որտեղ նույնպես շատ եղբայրներ և քույրեր են նստել՝ հետևելու համար հավաքույթին էկրանի վրա: Քարոզները գերմաներեն էին և համաժամանակյա թարգմանությամբ թարգմանվում էին տասներկու լեզուներով: Համացանցի միջոցով հավաքույթներին կարելի է հետևել ամբողջ աշխարհում: Գոհանում ենք Աստուծուց թարգմանիչների համար:

Այսպիսին էր Բրանհամ եղբոր թարգմանված քարոզների սեղանը արդեն տասը տարի առաջ: Իմ գլխավոր նպատակն էր գերմաներեն թարգմանել նախ կնիքների բացումից հետո արված քարոզները: Հիմա ավելի շատ քարոզներ կան: Ես կատարում եմ Տիրոջ տված երկու պատվերները՝ քարոզել խոսքը և բաժանել կերակուրը մինչև Տերը վերադառնա:

